

The image shows the front cover of an old book. The cover is decorated with a marbled paper pattern in shades of black, brown, and tan, featuring a complex, organic, cell-like or stone-like texture. The spine of the book is bound in a solid, vibrant blue material. In the upper left corner of the cover, there is a small, rectangular, cream-colored label with a decorative border. At the bottom left, a larger, rectangular, light brown paper label is affixed, containing the number '27343' printed in a bold, black, serif font.

27343



ԱՂԲԻԻՐԻ 1892 թ. VII ընծան

5

ԵՒԱՆԳԵԼԻՆԱ

(ԼՕՆԳՓԵԼԼՕ)

ՓԱԳՄ.

Ն. Տ.-ԱԻԵՏԻՔԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ «ԱՐՐ» Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

1892

Ե Ի Ա Ն Գ Ե Լ Ի Ն Ը

ՀՕՆԳՖԵԼԼՕԻ պօլմայի բովանդակութեան համառոտ
փոխադրութիւնը.

Այս փոքրիկ մանրամասն պատմական հիւր ունի:
1713 թ-ին Փրանսիան Անգլիային յսկանց Ակադիան, որ
այժմ կոչուում է Նոր-Շոտլանդիա, հակառակ համակրո-
թեան այդ գաղթական հատուածի բնակիչներին, որոնք
ակամսայ միայն եւթարկուցին բրիտանական տիրապե-
թեան:

Ըիչ ժամանակ անցնելուց շերտոյ, նոր համադրայի
համար պատերազմ ծագեց Անգլիայի եւ Փրանսիայի
մէջ, կասկած չնկար ակադիացիներին վրայ, թէ ծածոնկ
օգնութիւն եւ հասցրել Փրանսիացիներին, որոնց իբր
թէ հայթայթել էին պարեւ եւ գէնը: Զրնայելով որ այդ
կասկածը չհաստատուեց՝ Բրիտանական կառավարու-
թիւնը չափազանց խորութեամբ վարեց Ակադիայի
բնակիչներին հետ, արքայելով նրանց իրանց բնիկ գիւ-
ղերից եւ ցրելով ուրիշ գաղթական—հատուածների մէջ,
այլ եւ նրանց հողերը, կաշք եւ անասունները՝ պետու-
թիւնը գրաւեց:

1891 11 12

Պ Ե Ի Ա Ն Գ Ե Լ Ի Ն Ը



Доволено цензурою. Тифлисе, 1891 г. 12-го декабря.
Типография „Арар“ Т. Я. Наварьянъ, Бяратинская улица.



անական անտառը իս-
 պառ խուլ ու մոռալ կանգ-
 նած է: Աղմկալի եղեւնինե-
 րը եւ Կանադայի ծայթող
 մայրիները իրանց ըստ-
 ւար ծղիները տարածելէին
 խորհրդաւոր սուերային
 մթութեան մէջ: Արձանացած են նրանք՝ ինչ-
 պէս հին, սօսանւէր քուրմեր եւ տրտմական է
 նրանց զուշակող սօսաւիւնը, որին ճայնակ-
 ցում է թռչունների գեղգեղ համերգը: Դրա
 հետ յաւում է եւ գոռումը ովկիանական ա-

լիքների, որոնք յուսահատ կրծով զարնուում,
 փշրուում էին ժայռոտ ափերին եւ ողորում
 էին երբեմն երջանիկ եւ անհոգ՝ ակաղիա-
 ցիւնների կործանումը. նրանք այժմ՝ վտա-
 րանդւած են ամեն տեղ, նման հոկտեմբերի
 ամսւայ խստաշունչ քամիներից բռնւած
 տերեւների, երկար ժամանակ շրջեցին եւ
 ուրը-մուրը պտըտեցին, մինչեւ որ անհետա-
 ցան հեռու ովկիանոսում՝ եւ Գրան-պրէ չըբ-
 նաղ աւանը հիմնայատակ եղաւ ու մնաց
 միայն նրա անանց համբարը:



կաղիա՝ մի արգաստերը հով-
 տում, Մինա ծովածոցի ա-
 փերին սփռւած էր Գրան-պրէ
 ոչ այնքան մեծ աւանը: Երբ-
 չակայ ընդարծակ մարգագե-
 տինները ըագմաթիւ նախիրներին արօտ է-
 ին մատակարարում: Մի ընտիր պատնէչ

պաշտպանում՝ էր գիւղը ծովից. պերճ ար-
 տօրայքը, պարտէզները եւ այգիները, հուսկ
 ուրեմն, մարութ, ամբաշէն տնակները, որոնք
 թաղւած էին սաղարթախիտ կանաչի մէջ եւ
 շրջապատւած էին վառւած վարդի թուփե-
 րով՝ այդ ամենը ցոյց էր տալիս այստեղի
 բախտաւոր ընակիչների լիառատ ապրուստը
 եւ ջանասիրութիւնը:

Ամառւայ խաղաղ երեկոններին մայր
 մտնող արեգակի ճառագայթները փայլեց-
 նում էին փողոցները վերջաւոյսով եւ պայ-
 ճառապէս ճամանչաւորում էին պատուհան-
 ների սապակիներում եւ ոսկեգոյն գունաւո-
 րում էին տների տանիքները եւ ծխնելոյգ-
 ները: Կանայք եւ աղջկերք, ծինի պէս սպի-
 տակ թաշկինակները գլխներին եւ երփնե-
 րանգ շրջագգեստ հագած, խմբուէլ էին փողոց-
 ներում, ուրախ-ուրախ խօսում էին եւ մա-
 նում՝ ոսկեգոյն վուշը. նրանց արծաթահնչիւն
 ձայները խառնւում էին ճախարակների ըրո-
 ոցի հետ: Պատկառելի ձեւով եւ յամբա-
 քայլ անցնում էր փողոցով գիւղի երէցը,

երեխաները մօտենում էին նրանից օրհնութիւն ստանալու, իսկ կանայք եւ աղջկերրոտի էին կանգնում, յարգանքով նրան բարեւում:

Ի վերջոյ տղամարդիկ եւս վերադարձան տուն. արեգակը կամաց պարզ երկնակամարի ետեւը գլորեց հանգչելու համար եւ վերջնալոյսը խաղաղ մարում էր՝ տեղի տալով ժամաժանքին: Զանգակատունից լուեց երեկոյեան զանգահարութեան ողորանջիւնը, ծխնելոյզներից գորշ-գոյն ծուխը՝ նման կնորկի, համբառնում էր ղէպի երկինք:

Գիւղից քիչ տարակայ, Մինա ծովածոցի մօտ, ապրում էր իր կալւածքում տեղացի հողագործներից ամենից հարուստը Գրան-Պրէյում՝ այրիացած Բենեդիկդ Բել-Փօստենն, ամբողջ աւանի զարդն եւ պարծանքը համարւած հեզ եւ խոնարհ Եւանգելինա դստեր հետ, որ կառավարում էր նրա ամբողջ տնտեսութիւնը: Եօթանասնամայ ծերունին ամրակազմ եւ ուժեղ էր կաղնու

պէս, որի հսկայ ոստերի վրայ նստել էր փափուկ, սպիտակ ծիւնը: Զիւնի պէս ճերմակ էին նրա մագերը, իսկ թուշերը թուխ էին կաղնու տերեւների նման ձմեռ ժամանակ: Զքնաղ էր նրա աղջիկը՝ իր մեծ-մեծ սեւերակ աչքերով, որոնք այնպէս քնքշութեամբ նայում էին սուերասոր արտեանունքների տակից: Էլ աւելի գեղանի էր երբեւում՝ նա կիրակէ առաւօտները, երբ հանդարտ եւ համեստ գնում էր եկեղեցի աղօթագիրքը եւ համրիշը ձեռին, նորմանդական մերմակ գլխնոց ծածկած, քաց-կապոյտ շրջագետտը հագած, ականջից կախ արած հին ձեւի օղեր, որոնք մի ժամանակ քերւած էին Փրանսիայից եւ պահում էին նրանց տանը սերունդից սերունդ, որպէս թանկագին մի կտակած աւանդ: Տաճարում երիտասարդ չէր մնում, որ չըղիտէր նրան եւ ամենքը պարի էին հրաւիրում նրան՝ իրանց գիւղի պաշտպան սուրբի տօնի օրը: Սակայն այդ տղամարդիկներից միայն մէկն էր դուր եկել աղջկան՝ Դարրիէլ Լաժենեստը՝ դարբին

Բագիւի որդին, որ զիւղի քաջ ուժեղներեց մէկն էր: Բագիւը Բենեդիկտի խօսքընկերն էր. նրանց զաւակները միասին էին մեծացել որպէս քոյր եւ եղբայր, եւ հայր Փիլեցիանը— քահանան, որ եւ զիւղական ուսուցիչն էր, սորվեցրել էր նրանց կարդալ-գրել միասին մի գրքի վրայ եւ աղօթել մի աղօթագրքի վրայ: Դասերը վերջացնելուց յետոյ նրանք միասին վագում էին դէպի դարբնոց եւ աչքերը յառած դրանք կանգնած դիտում էին, թէ ինչպէս դարբինը ունելիքով ըննում էր ձիի պայտը մի խաղալիքի պէս ու կատակներ անելով մեխում էր սմբակին, մինչդեռ քիչ դէնը շիկացած սոնին դրած էր կրակի մէջ: Աշնանային մութ երեկոներին, երբ թանձոր աղջամուղջը ըննում էր փողոցները ու լոյսը ցայտում էր դարբնոցի ամեն մի ծակից եւ մեղքից, նրանք տաքանում էին կրակի մօտ, մտիկ անելով դարբնոցի փուքսի ուռելուն եւ հուսալ գալուն. իսկ երբ քաննելուց դադրում էին այնտեղ եւ կրակի վերջին կայծերն անգամ մոխիր էին կտրում, նրանք քրքջա-

լով խաղում էին, ուխտագնացութիւն կատարող վարդապետների ձեւերն անելով: Զմեւը նրանք սահնակներով սուրում էին սառցապատ գառիվայրերի վրայ. ամառը մագլցում էին դէպի տանիքները՝ արշաւելով ծիծեռնակների բունների վրայ, ագահաբար փնտրելով այնտեղ այն հրաշագործ քարը, որն իբր թէ այդ թռչունները բերում են ծովի ափից, որ նրանով իրանց ձագուկների աչիկները քաց անեն: Այդպէս արագ անցան տարիները, նրանք մեծացան, մէկը դարձաւ քաջ տղամարդ, ընդունակ ամեն տեսակ աշխատանքի, միւսը դարձաւ հեզ եւ սիրալիք աղջիկ՝ ընդունակ ընտանիքի մէջ երջանկութեան եւ սիրոյ աղբիւր լինելու:

Վրայ հասաւ աշունը. զիշերներն երկարացան եւ ցրտացան. շող թռչունները ձգում էին իրանց նսեմ, սառցապատ, հիւսիսային ծովածոցերը եւ տեղափոխում էին դէպի հասարակածի կղզիները: Հունձն արդէն վերջացել էր. անտառում ծառերը յուսահատ կերպով մարտնչում էին սեպտեմբեր

ամուսայ մրրիկների հետ. ամեն նշաններից կարելի էր գուշակել, որ կրկնի երկայն եւ խիստ ձմեռ: Մեղունները ընազոմամբ մեղր էին պատրաստել սովորականից աւելի, իսկ հնդկական որսորդները սպասում էին դաժան սառնամանիքների, վասնզի աղէսների մորթիները շատ թաւացել էին. այդպէս եղաւ աշունը, ապա սկսեցին այն հրաշալի եղանակով օրերը, որ բարեպաշտ ահադիացիների լեզուով կոչում էր «ամենայն սրբբոց ամսա»: Օղը լի էր մտազբօս եւ դիւթիչ լոյսով. ընտթեան տեսարանները պատկերանում էին պարզ ու մէկին գծագրութեամբ, որ նրանց տալիս էր առանձին թարմութիւն եւ մաքրութիւն: Թում էր թէ խաղաղութիւնը տիրել էր երկրին եւ ովկիանոսի յուզած կուրծքը հանդարտել էր թէպէտ ոչ ընդ երկար: Ամեն ձայները ներդաշնակել, մեղմացել եւ նւագել էին. արեգակը մի տեսակ քնքշաբար նայում էր ամեն բանի վրայ ոսկեգոյն շամանդաղի միջոցով եւ շողշողում էր ծառերի ծիրանագոյն

եւ դեղնագոյն սաղարթի վրայ իջած ցօղի աղամանդեայ կաթիլների մէջ: Տապ օրան յաջորդեց իրիկնաղէմը, որի աստղն արդէն վառում էր երկնքի երեսին, երբ հօտը տուն էր վերադառնում գամբոների ուղեկցութեամբ, որոնք հսկել էին հովիւների քնած ժամանակ կամ երբ աշնանային մառախլապատ գիշերներին գայլերի վոհմակը ոռնում էր մօտակայ անտառում: Աւելի ուշ՝ արդէն լուսինը դուրս գալուց յետոյ՝ վերադառնում էին բուրալից խոտով բեռնաւորւած սայլերը. կովերին կթելուց զկնի ամեն ձայն-ծպտուն դադարում էր, միայն լսում էր առակի խոխոջը եւ ծիծաղի փրթկոցներ, որ հասնում էր դաշտերի միւս կողմից:

Փերմեր Բենեդիկտը նստած էր՝ չիքուխը բերնին վառարանի մօտ. նրա պարթեւ հոստակի սուտերը Ֆանտաստիկաբար օրորում, աճում, սփռում էր պատի վրայով կամ անյայտանում էր մութ անկիւններում: Վառւած բոցի փայլը խաղում էր նրա քագկաթոռի կոշտ քանդակների վրայ եւ դա-

քակների վրայ դարսած ամանեղէնները պատուում էին: Ծերը երգ էր երգում, այն երգերը, որ նազել էին դեռ իր պապերը իրանց նորմանդական պարտէզներում եւ Բուրգունդիայի խաղողի այգիներում: Եւանգելիսան հօր կողքին նստած վուշ էր մանում, իր ճախարակի բոռոցը ձայնակցում էր հին երգի եղանակին: Յանկարծ ոտնաձայն լսեց եւ դուռը կրնկան վրայ քայլեց: Բենեդիկտը կօշիկների կրունկների շխշխկոցից իմացաւ, որ եկողն իր բարեկամ դարբին Բագին էր, իսկ Եւանգելիսայի բարախոտ սիրտը գուշակեց, որ եկողն միայն չէր:

Մրտագին հանդիպումից յետոյ, Բագիլը նստեց կրակի մօտ եւ ասաց. դու բախտաւոր ես, Բենեդիկտ, ամենքը ծնչւած են մի ծանր նախազգացումից, իսկ դու առաջւայ պէս երգում ես եւ կատակ անում: Ապա նա առնելով Եւանգելիսայի ձեռից չիքուխը, ծիւց եւ շարունակեց. ահա չորրորդ օրն է, որ անգլիական նաւերը կանգնած են մեր դէմ, դէպի մեզ ուղղած իրանց թնդա-

նօթները: Յայտնի չէ թէ ինչ չար մտադրութիւն ունին մեր դէմ, միայն հրամայւած է, որ վաղն հաւաքենք եկեղեցի ունկնդրելու արքայի վճիռը: Եւ հիմա շատերի սիրտը երկիւղից ճաքում է:

— Սակայն կարելի է անգլիացիք ոչինչ չարութիւն չեն հնարում, ասաց Բենեդիկտը, կարելի է անյաջող է եղել նրանց հունձը, եկել են այստեղ ցորեն տանելու:

— Մեզանում այդպէս չեն կարծում, տաք-տաք վրայ բերաւ դարբինը, տարակուսանքով զլուխը շարժելով: Շատերն արդէն փախել, թաքնուել են անտառում, շփոթւած սպասում են, թէ ինչ կը պատահի վաղը: Զուր չեն խլել մեզանից ամեն ինչ, որ քիչ նման էր գէնքի:

Ուրախ Փերմերն անհոգաբար ծալտալով պատասխանեց. — Մի՛ երկնչիր ամենեւին, սիրելի բարեկամ, եւ մեր բերկրութիւնը մի նաեմացրու վշտալի նախազգացումներով. մենք կը ստորագրենք կապակցագիրք, իսկ վաղը հարսանիք կը լինի: Բնակարանն ար-

դէն վաղուց սարքած կայ եւ ամեն պաշար նախապատրաստած, որ կըհերիքի մինչեւ իսկ մի տարի:

Եկաւ եւ նօտարը, մի ծեր, մէջքից կոացած մարդ, երկար ծուխ թակած, դեղնաւուն մազերով, եղջիրակերտ ակնոցները իսկ քթի ծայրին: Մինչդեռ ծերունիները խօսակցում էին օրայ նորութիւնների մասին, Եւանգելիսան վառեց քրօնգեայ լամպը եւ դրեց սեղանի վրայ եւ մի մեծ գաւաթ տանու պատրաստած զարեջուր բերաւ: Այն ժամանակ նօտարը հանեց թղթերը եւ թանաքամանը ու գրեց եռանդով հարսի եւ փեսայի անունը, նշանակեց թիւը. գրած էր ամենը մաքուր եւ գեղեցիկ, մեծ կնիքը փայլում էր արեգակի պէս լայն սպիտակ լուսանցքի վրայ: Երբ որ Փերմերը հանեց իր կաշե քսակը, դրեց սեղանի վրայ նրա վարձը, նօտարը վերկացաւ տեղից, օրհնեց հարսին եւ փեսային ու քարձրացնելով գարեջրի քաժակը խմեց նրանց կենացը, յետոյ հանդիսարար գլուխ տուաւ եւ դուրս

գնաց. թողնելով ամենքին խոր լուծեան մէջ նստած: Եւանգելիսան այն ժամանակ շահմատի սեղանիկը վառարանի մօտ դրաւ. քարեհոգի ծերունիները սկսեցին իրանց սիրելի խաղը, իսկ երիտասարդ ամուրիները յուշիկ խօսակցելով նստեցին պատուհանի առաջ եւ դիտում էին լուսինը, որ գունատ ծովի վերեւ լող տալով՝ արծաթափայլ լոյս էր տարածում մշուշապատ դաշտերի վրայ: Անհուն եւ անձայն երկնակամարի վրայ, իրար ետեւից, վառում էին աստղերը: Այդպէս անցաւ երեկոն: Հէնց որ զանգակատանը զարկեցին տասը ժամը, հիւրերը վերկացան եւ հրածեշտ տւին իրարու: Փեսայի հրածեշտի սիրալիք խօսքերը ընդմիջաւ գրկեցին Եւանգելիսայի հոգին եւ նրա սիրտը լցում էր բերկրութեամբ՝ նրանց յիշելիս:

27 34 3

Լուսացաւ. մի պայծառ առաւօտ էր. թեթեւ քամի էր փչում. Մինա ծովածոցից, ուր դեռ կանգնած էին անգլիական նաւերը: Ամբողջ գիւղը վաղուց գարթնել էր: Ակաղիայի հողագործները, ամեն կողմից, տօնական

զգեստներ հազած խմբում էին այնտեղ: Օղբ լի էր ծիծաղի բրբիջով եւ ողջոյնների բացակասնչութիւններով. աշխատութեան աղմուկը դադրել էր. փողոցներում՝ ամբոխել էր ժողովուրդը եւ առանձին ուրախ խումբերը նստած տների առաջ՝ խօսուէ՛ եւ տաքանում էին արեւում: Բոլոր տները լի էին հիւրերով, բայց ամենից շատ ժողովուրդ հաւաքել էր Բենեդիկտի մօտ եւ Եւանգելիսան սիրալիք եւ ուրախ՝ հիւրասիրում էր ամենին գարեջրով: Հարսանիքի մաշն արդէն պատրաստ էր բացօթեայ, մրգաբեր ծառերի տակ, որոնց մղները խոնարհել էին դէպի գետին ոսկեզոյն պտուղների ծանրութիւնից: Տան առաջ սրահի շաքում՝ նստել էին երէցը եւ նօտարը, Բենեդիկտը եւ դարբին Բագիրը, իսկ նրանցից քիչ դէնը տեղաւորել էր նազածու ջութակահարը. քամին խաղցնում էր նրա մերմակ մազերը եւ լոյսի ու սուտերի կէտերը սահում էին նրանց վրայով: Ուրախալիք երգում էր ծերուկը իր ջութակի ղողանջիւնին դաշնակցե-

լով եւ քախում խփելով փայտեայ կօշիկով. ուրախ պտտում էին պարելով ծերերը եւ երիտասարդները մրգաբեր ծառերի տակ մարգագետնի վրայ: Ամենից աւելի աչքի էին ընկնում Եւանգելիսան՝ Բենեդիկտի դուստրը եւ Գաբրիէլը՝ դարբնի որդին:

Այդպէս անցան առաւօտեան ժամերը. բայց անա զանգակատնից թնդաց թանձր եւ անընդհատ կոչական ղողանջիւնը զանգերի եւ սփուեց ամբողջ դաշտի տարածութեան վրայ: Տղամարդիկների խուռներամ ամբոխը լցւեց եկեղեցին. իսկ կանայք ժողոված նրա քակում սպասում էին:

Այն ժամանակ նաւերով եկած գինուրների խումբը երեւաց եւ գոռոզաբար քայլերով մտաւ եկեղեցի: Հնչիւն կամարների տակ արեղ կերպով շառաչում էին զէնքերը. եկեղեցու դռները փակեցան, քազմութիւնը շնչասպառ սպասում էր թէ ինչ կըլինի: Զօրախմբի պետը ցոյց տալով յոգնակնիք թագաւորական հրովարտակը՝ բարձրաճայն յայտարարեց. «դուք այսօր սրտունդ էք

ժողովուրդս անորին մեծոք թեան անգլիական արքայի հրամանով: Եւ մեր թագաւորը Աերոդախեո եւ բարի էր ձեզ համար. սակայն դոք ինչպէս պարտավար եղար նրա հորրմաժոթեան համար: Թող ձեր իսկ արտերը պատասխանեն այդ բանին. ծանր է ինձ համար իմ պարտքի կատարումը, սակայն ես պարտաւոր ձեմ հպարտակեղ ինքնակաշի կամքին: Ձեր հոգերը, տները եւ նախիրներն ու հօտերը գանձարանը գրաւում է, իսկ դոք ինքներդ այտուտից արտրուում էք որից երկիր: Ատոռւած տայ, որ դոք այնտեղ շատ պահեք ձեզ, ինչպէս վայել է հաւատարիմ հպարտակներին եւ խաղաղ մարդիկներին: Այժմսանից անորին մեծոք թեան կամքով իմ՝ գերիներս էք:՝

Ինչպէս մտրիկ, որ կործանում է տներ եւ կարկտակոծ է ամում արտերին եւ անասուններին, այդպէս այս խօսքերը փշուրեցան ակաղիացիների գլխին: Մի քանի վայրկեան մեռելային լոռիքից յետոյ՝

յուսահատութեան եւ ցամախ ըսցականչութիւններ հեղեղի պէս անելով սաստկացան եւ ամենքն, ինչպէս մի մարդ՝ գժածի պէս զրոհ տիւն դէպի դռները. ըայց ի զուր. աղաղակ, հեկեկանք եւ անէծք թափում էին ամենքի բերնից, անասելի ժխորով լցեց եկեղեցին. ամենից վեր էր քարծրացրել դարբինը իր հուպ տւած բոռնցքները, թափահարում էր ձեռները. նրա դէմքը ծամածրուել էր կատաղութիւնից. ճայնը վայրագ էր դարձել եւ խոպոտ:

— Բշենք անգլիացի ըննակալներին, գոչեց նա. մենք երբէք նրանց հաւատարմութեան երդում չենք տւել. մն՛հ օտարականներին, որոնք անիրաւարար յարձակում են մեր տների եւ մեր ցանքերի վրայ:

Այս խօսքերի վրայ զինուորի մէկը ձեռքի մի հարւածով ընդհատեց նրա ճառը եւ գետին զլորեց նրան: Այն ժամանակ շփոթալի կոիւների եւ վայրագ աղաղակների միջոցին հայր Փելիցեանը երեւաց տաճարի բեմի սանդուղքների վրայ: Չեղը վեր մեկ-

նեց թէ չէ, տիրեց միանգամից խաղաղութիւնը եւ նա տխուր ու զսպած ծայնով ատենաբանեց այսպէս. «Ի՛նչ է եղել ձեզ, իմ սիրելի ժողովուրդ. ի՛նչ խնայցնողութիւն է պատահել ձեզ. քառասուն տարին ղ միայն խօսքով, այլ եւ գործով ամբողջել է ձեզ իրար սիրել: Մի՞թէ այս է իմ սոցիթքներին եւ քաջած գրկակներին պրտուողը: Իո՞ք պղծու՞մ էք Աստուծոյ տաճարը բռնութեան եւ ստեղծութեան գործերով: Ահա Բրիտանոսը իր խաչափայտից նայում է ձեզ. նայեցեք ի՛նչ նեղութիւն եւ ինչքան գթութիւն կայ նրա թախծալից հայեացքում: Նրա բերնից շառ՜մ է. „Հայր իմ, ներիր դրանց:“ Այս վիրասորանքի եւ վշտի դատը ժամին մենք էլ կրողներք նրա հետ. „Մեր Հայր, ներիր դրանց“:

Սկսեց երեկոյեան ժամասացութիւնը. սրտագին եւ ջերմ՝ կերպով էր սոցթում՝ հայր Փելիցիանը եւ ժողովուրդը սիրտը լցւած բազմազան զգացմունքների գեղմունքից՝ հետեւում էր նրա օրինակին:

Մինչ-այս մինչ-այն, սոսկալի գոյժը տարածեց ամբողջ գիւղում: Կանայք եւ երեխայք կոծ անելով շրջում էին տնից տուն: Երկար ժամանակ կանգնած էր Եւանգելիսան հայրենի տան սրահի առաջ, ձեռը ըրոնած աչքերի վերեւ, որ նրանց պահպանէր արեւի շեղ ճառագայթներից. արեգակը շրջացուցիչ փառահեղութեամբ մայր մոնելու վրայ էր գիւղի ետեւում: վերջալոյսի շողերը ըրըրըրում էին պատուհանների ապակիներում՝ եւ ոսկեգոյն փայլի հոսանքը պատել էր տանիքները: Երկար ժամանակ սարքած մնաց սպիտակ սիւնոցով ծածկած սեղանը պատրաստի ընթրիքով. շատ սպասեց Եւանգելիսան իր հօրը, մինչեւ ծառերի երկար ստեղծները իրար ընդհատելով ընկան դաշտերի վրայ:

Եւս ստաւել մուսլեց նրա հոգին, բայց երկնուստ պարգեւները նրանից չըվերացան, այն է՝ գթասրտութիւնը, յոգնահամբեր հեզութիւնը, ներողամտութիւնը, սէրն ու յոյսը: Իրան մոռացած, նա շրջում էր գիւղում,

խրատուներով հայեացքով եւ խօսքով յուսա-
 բեկ կանանց, որոնք զիշերը վրայ հասնե-
 լու հետ՝ կամաց-կամաց վերադառնում էին
 իրանց տնային հոգսերի ետեւից կենալու:
 Ապա Եւանգելիսան գիշերային մթութեամբ
 պաշարւած՝ կանգ առաւ եկեղեցու մօտ: Ոչ
 մի ձայն չէր լսում այնտեղից. զուր ա-
 կանջ էր դնում նա պատուհանների եւ դռ-
 րան մօտ: Վերջապէս սրտի խոռվութիւնը
 յաղթեց նրան եւ նա այլայլւած սկսեց ձայն
 տալ Գարրիէլին: Սակայն ննջեցեալների շի-
 րիմները մունջ էին եւ աւելի մոայլ էր թը-
 րում այն գերեզմանոցը, որ յանկարծ կլանել
 էր այնքան կենդանի մարդկանց: Աղջիկը
 յամբարայլ վերադարձաւ իր հայրենի դա-
 տարկւած տունը. նրա քայլերը տխուր ար-
 ձագանք էին տալիս: Գիշերայ մեռելային
 հանդարտութեան մէջ նրան հասաւ տեղա-
 տարափ անձրեւի շառաչի ձայնը. նրա պա-
 տուհանի առաջ բուսած թզկնու դեղնած տե-
 րեւները թափում էին անձրեւից. կայծակը
 պայծառ փայլում էր եւ որոտմունքի բով-

բիւնները յիշեցնում էին մարդու ամենակա-
 րող Տիրոջ գօրութիւնը, որ կառավարում է
 երկիները եւ երկիրը:



որս անգամ՝ ծագեցաւ եւ մայր
 մտաւ արեգակը. հինգերորդ օրը
 դաշտի վրայով ձգել էր սայլերի
 ճշարքը տրտում՝ ու անձայն. նրանց
 վրայ Ակադիայի կանայքը կրում
 էին իրանց տնային իրեղէնները դէպի ծովի
 ափը, մերթ-ընդ-մերթ նայելով դէպի իրանց
 բնակարանները, մինչեւ որ նրանք անյայ-
 տացան անտառի ետեւը: Երանց կողքով
 վազվզում էին մանուկները բոթելով եգնե-
 րին, շրխկիկացնելով եւ զնգզնգացնելով ի-
 րանց խաղալիքները:

ծովածոցի ափին կոյտ-կոյտ թափած էին խեղճերի ինչքը: Ամբողջ օրը սայլերը կրում էին ամեն տեսակ տնային իրեր եւ պաշարեղէն ու ամբողջ օրը մակոյկները անց ու դարձ էին անում ափից դէպի նաւերը: Արեւ-մտոցին եկեղեցու գաւթից լըսւեց թմբուկների բոմբիւնը եւ կանայք ու աղջկերք իրար կպած խմբւեցան. մոայլ թափօրը դուրս եկաւ տաճարից, առաջից գնում էին զինւորները, իծկ նրանց ետեւից Ակադիայի խոնարհ Ֆերմերները: Ինչպէս ուխտագնացները երգով են անցկացնում իրանց յոգնածութիւնը եւ հայրենիքի կարօտը, այնպէս էլ Ակադիայի զիւղացիներն էին գնում դէպի ծովի ափ, շրջապատւած իրանց կիներով եւ աղջիկներով:

Կէս ժանապարհին Եւանգելիեան անդորր եւ տրտմութեամբ սպասում էր թափօրին, կամքի ոյժով յաղթելով իր վշտին: Նա տեսաւ Գաբրիէլի յուզւած, գունատ դէմքը. արցունքը հոսում էր աղջկայ աչքերից եւ առաջ դիմելով դիմատրեց նրան եւ

շնչաց. «արիւացիր Գաբրիէլ, մենք սիրում ենք իրար եւ բախտի ամեն տեսակ հարաւածները մեզ ւարդաւիելչի չեն:»

Ժպտալով էր արտասանում նա այդ խօսքերը, քայց յանկարծ ծայնը կտրւեց, երբ տեսաւ կամաց-կամաց մօտեցող հօրը: Ինչպէս նա փոխւած էր: Էլ առաջւայ կարմրութիւնը չըկար նրա երեսին, աչքերը հանգել էին եւ նոյն իսկ նրա քայլերը, կարծես, ծանրացել էին կսկծից, որ մնշել էր նրա հոգին: Ոգոց հանելով սակայն, ժպիտը ըերնին աղջիկը փարեց իր հօրը ու սփոփում էր նրան եւ յուսադրում:

Ծովափին մեկնելու միջոցին սկսեց հըրհըրոց եւ շփոթ. արագ-արագ երեւում էին մակոյկները եւ ընդհանուր իրարանցումի ժամանակ կանայք կորցնում էին իրանց ամուսիններին, մայրերը մոռանում եւ ափին էին թողնում իրանց զաւակներին:

Գաբրիէլը եւ Բագիլը զանազան նաւերի վրայ ընկան, իսկ Եւանգելիեան յուսարեկ եղած դեռ եւս ափի վրայ կանգնած էր իր

հօր հետ. դեռ գործի կէսն անգամ ի կատար ածւած չէր, երբ արեւը մայր մտաւ եւ վրայ հասաւ գիշերը: Տեղի տուող ծովը արագ մեկնում էր ափից, մերկացնելով աւագոտ ծանծաղկոտը, որ ծածկւած էր տղմով եւ ջրածին մամուռով: Անտուն ակաղիացիները գիշերելու համար տեղաւորւեցին սայլերի եւ տնային ամեն տեսակ իրերի արանքում, նման գնչուների կամ խոտփարար բնորոտների խառնիճադանճ քանակի:

Գիշերը վրայ հասնելու հետ կովերը դաշտից վերադարձան եւ քառաչելով զուր սպասում էին իրանց տիրուհիներին: Լուռ ու մունջ էին փողոցները. զանգակատնից չէին հնչում զանգի զարկերը. կապտաւուն ծուխը վեր չէր սլանում ծիսնելոյգներից եւ ճրագի լոյս չէր երելում պատուհաններում:

Սակայն ծովափին փոթորկից ցամաք նետած մակրոյկների եւ նաւերի քեկորմներից ու տախտակներից շինած խարոյկները վառում էին. դրանց շուրջը մոռայլ ուրա-կանների պէս տխրմամբ դէմքերով նստել

կամ պարկել էին մարդիկ. լուսմ էին այրմարդիկների եւ կանանց ծայները, երեխաների աղաղակն ու լացը: Բահանան քաջալերելով եւ մխիթարելով, մի խարոյկից անցնում էր միւսը: Հուսկ ապա նա մօտեցաւ այն տեղին, ուր նստած էր Եւանգելիսան իր հօր հետ, առկայծող կրակի լուսով նկատեց նա ծերունու դէմքը՝ նիհարած, զունատ, վայրագ եւ իսպառ անկենդան դարձած: Զուր էր նրա հետ խօսում՝ Եւանգելիսան խանդադատանքով, զուր էր մատուցանում նրան կերակուր, նա անշարժ նստած՝ ապշած հայեացքը յառել էր քոցկուտող կրակի ալաւին:

— Բնենդիկտ, դարձաւ նրան գթասիրտ քահանան եւ աւելի ոչինչ չըկարողացաւ ասել. նրա սիրտը կուշ եկաւ, քառերը մա-ցին նրա թերնում այսպիսի սարսափելի վշտի տեսարանի յանդիման: Լուռ կերպով նա իր աջը դրաւ աղջկայ գլխին եւ արտասոււլիք աչքերն ուղղեց վերը դէպի երկինք, ուր առաջւայ պէս խաղաղ եւ հանգիստ փայլում էին մունջ աստղերը, որոնք

անհաս էին մարդկային ցաւերին եւ տան-
ջանքներին:

Հաբաւային կողմից դուրս լողաց արիւ-
նագոյն աշնան լուսինը եւ տարածելով իր
ճառագայթները դէպի լեռներն եւ դաշտո-
քայքը, լուսաւորեց ժայռերն ու վտակները՝
աւելի թանձրացնելով մթութիւնը սուտեր ա-
դերում: Աւելի եւ աւելի պայծառապէս նս-
կը լոյսը սփռեց գիւղի ձկնտեսայ տանիք-
ների վրայ, փայլեցնելով երկնակամարը,
ծովը եւ նրա խարիսխ ձգած կանգնած նա-
ւերը: Յանկարծ դէպի վեր բռնկւեցան բո-
ցափայլ ծխի ոլորուն եւ գալարող սիւներ՝
արտափայլելով հրեղէն լեզուներ. քամին
բարձրացաւ եւ վերցնելով կրակւած ձողերը
ու վառւած ձկնտոր՝ տանում էր եւ պտտեց-
նում օդի մէջ. սեւ մուխը կայծերով փայ-
լելով միանգամից դուրս ընկաւ հարիւրաւոր
տանիքներից:

Լուռ եւ ապշած ամբոխը տառած մնաց
այս տեսարանի առաջ, քայց ապա սկսեց
յուսահատական ողբ եւ աղաղակ: Այդ պայ-

ծառ լոյսից խաբւած մի տեղ արաղաղը
կանչեց. քամին ըբրում էր անասունների
յուզիչ քառաչի եւ հնարեկ եղած շների
հաշոցի ձայնը:

Բայց անա մի սոսկալի գոչիւն տարած-
ւեց ամեն կողմ, որից դղրդում էր անտառն
ու դաշտօքայքը, ինչպէս որ լինում է երբ
կայրենի գոմէշներն երկիւղից բռնւած մըրկի
պէս սլանում են. որովհետեւ գիւղացիների
նախիրն ու ձիերը դուրս պրծնելով, անագին
ժխորով ցրեցան դաշտերում: Բահանան եւ
աղջիկն ընդարմացած՝ դիտում էին այս
պատկերն եւ երբ նրանք քիչ ուշքի գալով
դիմեցին դէպի իրանց մունջ ընկերը՝ ծե-
րունին,—նա արդէն անշարժ մնում ընկած
էր ծովափի աւազի վրան...

Ամեն ինչ սեւացաւ եւ անգելինայի աշ-
քին եւ նրա գլուխը թուլացած կախ ընկաւ
կուրծքի վրան. երկար մնաց նա անզգայ
թմրածութեան մէջ. ապա երբ աչքերը բաց
արաւ, նա տեսաւ, որ բազմութիւնը շրջա-
պատել է իրան եւ կարեկցող դէմքեր նա-

յում էին եր վրայ. հրդեհի լոյսն ընկել էր
ամբողջի վրայ եւ ծիրանի գոյնով ներկել էր
երկնակամարը: Լաւեց մէկի ծանօթ ծայնը.
Թաղենք նրան այստեղ ծովի ափին. երբ
աւելի լա օրեր կըզան մեզ համար եւ մենք
կը վերադառնանք նժողենութիւնից, այն ժա-
մանակ նրա մարմինը կըփոխադրենք գե-
րեզմանատուն:

Անյապաղ հրդեհի լուսով ծովի ափին
գերեզման քրեցին եւ առանց զանգահարու-
թեան՝ թաղեցին հողագործ-Ֆերմեր Բենե-
դիկտին. միայն ծովափի ջրի զարկերն էին
ծայնակցում նրանց աղօթքին:

Մակոյկները կրկին խաղացին ափից
դէպի նաւերը. նորոգ մակընթացութիւնը
սկսելիս՝ նաւերը նաւահանգստից մեկնե-
ցան. ցամաքի վրայ՝ թողեցին շիրմի թարմ՝
հողակոյտը եւ հիմնայատակ կործանուած
աւանը:

IV



ի քանի տարիներ անցան
այն ժամանակից, երբ
Մինա ծովածոցից հեռա-
ցան նաւերը տարաբախտ
աբսորականներով: Եստ
հեռու, զանազան վայրե-
րում վեր բերին ակադիացի-
ներին. միայնակ, անտուն, ա-
նոք եւ անապառէն անցնում է-
ին նրանք քաղաքից քաղաք սկսած սառը
հիւսիսի լճերից մինչեւ սոթագին առասներ
— տափաստանները հարաւի, որոնելով կա-
րեկցողներ եւ յարկ ապաստարանի. շատերն
յուսահատուած եւ սրտաբեկ՝ ցանկանւմ է-
ին մահ: Եստ յաճախ նրանց մէջ կարեցի

էր հանդիպել մի աղջկայ, որ հեզութեամբ եւ խոնարհութեամբ կրում էր իր վիճակի դառնութիւնը: Նա դեռ գեղեցիկ էր եւ մատաղ, սակայն կեանքը նրա համար մի թախծալից եւ ամայի անապատ էր, ուր սփռւած էին իր քարեկամների շիրիմները, քարեկամների՝ որոնց մէջ դժբախտութիւնը եւ տանջանքը սպանել էին ապրելու եւ յուսալու ընդունակութիւնը: Աղջկայ կեանքի մէջ նկատուում էր մի տարօրինակ ըան անկատար մնացած եւ չրվերջացած. ասես յունիսեան պայծառ արեգակը յանկարծ կանգ էր առել մարելով եւ սկսել էր իջնել, դառնալ յետ դէպի իր ծագած տեղը: Երբեմն նա մի առ ժամանակ մտում էր քաղաքներում, մինչեւ որ մի ներքին յուզմունք եւ առաջ գնալու մի անյազ ծգտում՝ չէին բշտում նրան նորից թափառելու եւ որոնման ելնելու: Գերեզմանոցներում՝ նա կարդում էր խաչերի ու քարերի վրայ գրածները, կամ նստում էր անարձանագիր շիրիմների հողակոյտերի վրայ մտածելով, որ գուցէ այդտեղ էր ա-

ծիւնը նրա, որին նա երկար ժամանակ որոնում էր: Երբեմն նա հանդիպում էր ծանօթ մարդկանց, որոնք նրան ծանաչում էին՝ պատահած լինելով այն տեղերում, որոնց արդէն մոռացել էին. նրանցից ոմանք ասում էին աղջկան. «Գաբրիէլ Լաժեկեանիս, այո, մենք տեսել ենք. ևս դաբրիէլ Բագիչի հետ, այժմ՝ պրերիաներում յայտնի որտորակեր են եւ գազան բռնողներ:»

Միւսներն էլ ասում էին. «Գաբրիէլ Լաժեկեանիս, այո, մենք տեսել ենք. ևս Լոռգիտանիայում ուղեցոյցի պաշտօն էր կատարում:»

Շատերը նրան խորհուրդ էին տալիս մոռանալ իր խնդրածին եւ ամուսնանալ նօտարի որդու հետ, որ շատ տարուց ի վեր սիրում էր նրան: Բայց Եւանգելինան հաստատապէս հրաժարում էր ընծալով հաւատարիմ՝ մնալ իր տարակայ փեսացուին: Հայր Փելիցեանն խրախուսում եւ ոյժ էր տալիս նրան ասելով. սէլը նոյն իսկ անջատման միջոցին բերկրութիւն է

պատճառում մարդուն հրաշապէս պայծա-
ռացնելով եւ զօրեղացնելով հոգին:

Մի մայիսեան շքնաղ օր, արագասան
եւ լայնատարած Միսիսիպի գետի արծա-
թափայլ ջրերի վրայով լող էր տալիս մի
մակոյկ, որ վարում էր մի ակաղիացի: Ար-
տորականների մի խումբ տղամարդիկ, կա-
նայք եւ մանուկներ, լուր առած լինելով կամ
միայն լոկ յուսով գնում էին Օպելուզի հի-
ասքանչ պրերիաներում իրանց մերձաւոր-
ներիս որոնելու: Նրանց մէջն էր Եւանգելի-
նան եւ հայր Փելիցիանը: Օր օրի ետեւից
մութ ու վայրագ ծմակների միջով նրանք
իջնում էին գետի ընթացքով դէպի ցած.
գիշերներն անցուցանում էին նրանք ափե-
րում, խարոյկների շուրջը խմբւած: Նրանք
մտնում էին մշտնջենական ամառայ թա-
գաւորութիւնը, ուր գետը փառահեղաբար
շրջում է դէպի արեւելք եւ ընթանում հո-
վանաւորւած կիտրոնի եւ նարինջի անտառ-
ներով: Մոյգ կանաչ կիպարիսների ոստերը
ստերախիտ կամարներ էին կազմել նրանց

զխավերեւն եւ ծառերից կախւած մա-
մուռները ծածանւում էին քամոց: Գետի
հոսանքին հետեւելով, նրանք ընկան գետին
միացող կողմսակի գրեթէ կանգնած ջրերի
ամբողջ լաբերինթոսի մէջ: Խոր եւ մռնե-
լային լուծիւնն ընդհատում էին միայն
կոունկները, որոնք արելը մայր մանեւուց
յետոյ վերադառնում էին դէպի իրանց
բունները, այլ եւ բուերը, որոնք լուսնի դուրս
գալը դիմաւորում էին դիւական քրքիջով:
Լուսնի շողերը թափանցելով սաղարթախիտ
կամարների միջից, արծաթի պէս փայլեց-
նում էին հանդարտ ջրերը եւ կիպարիսնե-
րի ու մայրիկների սիւնահանգոյն շարքերը:
Չորս կողմի առարկաները մի տեսակ մը-
շուշապատ էին երեւում եւ ուրախանների
նմանում, անձկալի զգացմունք էր տիրում
հոգուն, անիմանալի եւ անխուսափելի դժբախ-
տութեան մի նախազգացում: Մի տարօրի-
նակ ֆանտազիա պաշարել էր Եւանգելի-
նային եւ պահպանում էր նրա զարթու-
թիւնը, որովհետեւ ամեն քան կարծես վր-

կայում էր, որ իրանից առաջ Գաբրիէլն էր գնացել այդ սաղարթախիտ մութ կամարների տակով եւ թում էր նրան, թէ թիւփարութեան ամեն մի զարկը նրանց մօտեցնում էր իրար:

Միայն հետեւեալ օրւայ կէս օրին նրանք դուրս եկան խորհրդաւոր սահանքներից. նրանց առաջ սփռւած էին արեգակի ոսկեշող ծառագայթներով լուսաւորւած Առշափառւի լճերը. բիրապատիկ ջրային շուշանները օրօրում էին թիակների զարկերից, եւ լոշտակի ոսկեգոյն ծաղիկները թիւփարների գլխներից քարծր էին. հասարակածի օդը լի էր ծաղկած մագնօլիանների եւ վարդերի բուրմունքով:

Անբուն անցուցած գիշերւանից յետոյ՝ պարտասած ճանապարհորդները կանգ առին մի փոքրիկ, կանաչազարդ, սոււերաշատ կղզու մօտ եւ քնեցին թանձրախիտ մայրիների տակ. երջանիկ եւ գեղեցիկ երագները եկան զուրգուրալու Եւանգելիսայի հետ:

Այդ ժամանակ քազմաթիւ կղզիների

արանքներում երեւաց մի նաւակ, որ որսորդների եւ զազան բռնողների ուժգին թիւփարութեամբ սլանում էր. նա իր ընթացքն ուղղած դէպի հիւսիս՝ գնում էր քիզօնների եւ ջրշունների աշխարհը: Ղեկիմօտ նստած էր մի երիտասարդ, որի հայեացք արտայայտում էր հոգս եւ խոր մտածմունք. նրա դէմքը հասակին անհամապատասխան փխրութիւն էր կրում: Հակառակ կողմից նրանք սրագ անցան կղզու մօտով. նրանք չրկարողացան նկատել թուփերին կապած մակոյկը եւ նրանց նաւակի թիակների շաշիւնը զարթնացրաւ մեր յոգնած ուղեւորներին... Վերջնալոյսը հրդեհի նման հուրհրատում էր երկինքն ու ծովը, երբ ակաղիացիների նաւակը մտաւ թէչ գետը, որ կըտրում էր Օպելուսի դաշտավայրերը: Բոքաւից օդում անտառի ետեւից երեւաց ծուխի սիւնը, որ քարծրանում էր եւ ցոյց էր տալիս թէ մօտակայքում ընակչութիւն կարլուում էին հովական փողերի ձայն եւ կովերի քառաչ:

Սուերաւոր կաղնիների տակ իսպանական մամուռի ծոպերով փաթաթուած, շրջապատուած մի ճոխ այգիով կանգնած էր մի տուն՝ կառուցուած կիպարիսների գերաններից, թեք, լայն տանիքով: Պտուտակաւոր վարդենիները եւ խաղողի որթերը փաթաթուել էին այն սիւներին, որոնց վրայ էր շինուած մի ընդարձակ պատշգամբ: Հեռուով, դաշտի վրայ, լայն ու ոսկրոտ դէմքով մի ձիաւոր, լայն իսպանական գոակ դրած, ձին կանգնեցրաւ եւ կալածատիրոջ պէս անդորր կերպով, հիանում էր այդ խաղող տեսարանով: Ապա նա բերնին դրաւ փողը եւ փշեց, որի ձայնի վրայ սկսեցին հաւարել ճերմակ եղջիրաւոր կովերը: Երկատելով մանկամարդ աղջկանը եւ քահանային, ձիաւորը մօտեցաւ նրանց եւ յանկարծ զարմացած՝ թամբի վրայից ցած թըռաւ եւ խանդաղատանօք վազեց դէպի նրանց զրկաբաց: Դա ինքն էր դարբին Բագիւլ. ծիծաղելով եւ հեծկտալով զրկախառնուեցան նրանք եւ առաջի-բերան շիմացան ինչ խօ-

սել լուծ էին: Եւանգելիսան շնկատելով Գարրիէլին՝ անհանգիստ եղաւ եւ տարակուսանքի մէջ ընկաւ:

— Միթէ դուք անցնելով Աթշաուից չը հանդիպեցիք իմ Գարրիէլի մակոյկին, հարցըրեց վերջապէս Բագիւլը:

Եւանգելիսան լսելով, որ Գարրիէլը մեկնած է հեկեկաց:

Արեացիը, գաւակս, ասաց Բագիւլը, ջանալով նրան սփոփել. Գարրիէլը ուղեւորւել է հէնց այսօր. տաք-զլուխ պատանին ինձ մնակ է թողել իմ հօտերիս եւ երամակներիս հետ: Երա հոգուն օտար էր հանգստութիւն եւ բերկրութիւն, նա երկար ժամանակ շողիմացաւ մեր խաղաղ կենցաղին: Բոլոր ուշքն ու միտքը քեզ նւիրած լինելով եւ միայն քո մասին խօսելով նա մեր հոգին քաղել էր, այնպէս որ, ես վճռեցի նրան քաղաք դրկել, որ մեր ջորիները վաճառէր իսպանացիներին: Այնտեղից նա կըզնայ կարմրամորթներէ կողմերը աղէմներ եւ ջորշուններ որսալու: Ուրեմն մի յուսահատ-

ւիո, նա գետի հոսանքին հակառակ է տողում, շատ հեռացած չի կարող լինել, այնպէս որ մենք վաղ առաւօտեան նրա ետեւից կընկնենք եւ, երեւի, շուտով կըհասնենք նրան:

Շուտով յայտնուեց եւ ջութակահար Միքայէլը, որն արդէն քանի տարուց ի վեր ապաստանուել էր Բագիլի յարկի տակ: Ծորեկ ակադիացիները գտրմացած մտիկ էին անում երբեմն դարբին եղածի հարստութեան վրայ եւ ականջ էին դնում նրանց պատմածները այնտեղի հրաշալի օղի եւ արգաւանդ հողի մասին եւ անթիւ հօտերի մասին, որոնք ազատ արածում են պրերիաներում եւ տէր-տիրական չունին. առ, ինչքան կարող ես: Եկտորներից իւրաքանչիւրը սկսեց գոհութեամբ ինքն իրան յուսադրել, որ իրանք էլ ոչ պակաս քարուք վիճակ կազմել կարող են իրանց համար:

Միւս օրը հագիւ թէ ծագել էր պայծառ արեգակը, երբ Եւանգելիսան եւ Բագիլը հրաժեշտ տալով հայր Փելիցիանին

Ճանապարհ ընկան: Ուրախ ու զւարթ սկսեցին իրանց ուղեւորութիւնը նրանք այս առաւօտ, շահատակելով եւ ըղձալով հասնել նրա ետեւից, որին քմահաճ քախտը հալածում էր եւ անաջ վարում՝ որպէս մի չոր տերեւ անապատում: Սակայն ոչ այդ, ոչ յաջորդ եւ ոչ երրորդ օրը նրանք նրա հետքը չըգտան. շատ օրեր անցան, միայն անորոշ համբաններն էին նրանց ուղղում՝ այս եւ այն կողմը: Վերջապէս Ադայնօնի քաղաքի իսպանական հիւրանոցում նրանք իմացան, որ հէնց նախընթաց օրը Գարրիէլն իր ընկերներով եւ ուղեկիցներով թողել էր գիւրը եւ ճանապարհուել դէպի լայնածաւալ դաշտավայրերը—պրէրիաները:

Հեռու դէպի արեւմուտք, ընկած է մի ամայի, լեռնոտ աշխարհ, քարձօր, ձիւնապատ կատարներով եւ անձուկ ու խոր կիրճերով, որոնցով գաղթականները դժւարութեամբ ճանապարհ են գտնում իրանց համար Օրեգօնի հովիտն անցնելու:

Արեւելեան կողմից հոսում է լեռն-

րից կարկաշատան Նեքրոսկ գետը, հարա-
ւից աւազոտ եւ ապառաժոտ սարերից խո-
խոջալով վազում են դէպի ովկեանը ան-
թիւ վտակներ: Այդ աուակների միջավայ-
րերում էին ճոխ պրերիաները, որոնց վրայ
արածում էին ըիզոսների վայրի գոմէշների,
եղջերունների, վայրի այծերի եւ ձիերի ե-
րամակներ: Արագասան գետերի ափերով
բսնում էին ծմակներ՝ մութ անտառներ՝
որոնց մէջ միայնակեաց ապրում էին մը-
ռայլասէր արջերը: Ահա այդ երկիրն էր
գնացել Գարրիէլը իր ընկերակից որսորդ-
ներով եւ գազան ընտղներով:

Օր-օրի ետեւից կարմրամորթ ուղեցոյց-
ների առաջնորդութեամբ Բագիլն եւ Եւան-
գելիման չում էին մի եւ նոյն ծանապար-
հով յուսալով հասնել Գարրիէլին: Երբեմն
նրանց թում էր, որ նրանք հեռում ծուխ
են նկատում, որ առաւօտեան պայծառ ե-
ղանակին երեւում էր, իբր թէ նրա օթեա-
նած կէտից. բայց երեկոյեան մօտենալով
նոյն տեղին, գտնում էին միայն հանգած

ածուխ եւ մոխիր: Նրանց հոգին տրտում էր
եւ նրանց մարմինը յոգնածութիւնից տկար,
սակայն յոյսը, ինչպէս խարուսիկ Փատ-Մոր-
գանը 1) գրաւում էր նրանց առաջ եւ առաջ:

Մի անգամ, երեկոյեան, նրանք նըս-
տած էին կրակի շուրջը, նրանց իջեւանը
մտաւ լութեամբ մի կարմրամորթ կին.
նրա դէմքն արտայայտում էր վիշտ եւ ան-
տրտունջ համբերութիւն: Նա շատն ցե-
ղիցն էր եւ տուն էր վերադառնում խստա-
բարոյ կռմանի վայրագ ցեղերի մօտից, ո-
րոնք սպանել էին իր մարդուն: Զգացած
նրա պատմութիւնից՝ ուղեւորները նրան
նստեցրին իրանց հետ խարոյկի մօտ եւ
առաջարկեցին ընթրիք, որ բաղկացած էր
ըիզօսի խորոված մսից եւ կրակի վրայ ե-
փած ընդեղէններից: Առաւօտեան այդ կինը
նրանց հետ ծանապարհ ընկաւ եւ պատ-
մում էր, որ լեռների արեւմտեան լանջի
վրայ առաքելական միաբանութեան գլխա-

1) Այդի երեւացող տեսիլ, որպէս կրկններույթ:

ւորն է ապրում, որ քարոզում է Ս. Լոգու
 եւ Յիսուսի մասին: Ուղեւորները հրձու
 ընդունեցին այդ լուրը եւ ուղղակի դիմեցին
 դէպի քարոզիչները, յոյս ունենալով նրան-
 ցից մի բան իմանալ: Արեւմտոցին նրանք
 հասան մի գետի ափ, ուր մարգագետնի
 վրայ նրանք տեսան Յիսուսեան միաբան-
 ների վրանները:

Գիւղի մէջ տեղում, մի հսկայ կաղնու
 քնից կախած էր խաչափայտը. այդ տեղը
 նրանց իբրեւ մատուռ էր ծառայում, ուր բո-
 չոր քնակիչները ժողովում էին երեկոյեան
 աղօթքին: Ուղեւորները լուռ կերպով միա-
 ցան նրանց հետ:

Միաբանութեան պետը ըերկրութեամբ
 էր ունկնդրում մայրենի քարբառը. հրաւի-
 ռելով ուղեւորներին իր օթեւանը՝ նրանց
 քազմեցրաւ զազանների մորթիների վրայ եւ
 հիւրասիրեց քրինձի քլիթներով եւ իր սա-
 փորիկի ջրով: Հագիւ վեց օր կրլինի, որ
 Գաբրիէլը հանգիստ առնելու համար ընկող-
 քանած էր նոյն տեղը, ուր այժմ նստած էր

Եւանգելիսան, պատմել էր նոյն տխուր զը-
 րոյցը: Ապա նա ուղեւորեց հեռու, դէպի հիւ-
 սիս, միայն այն հաշուով, որ աշնանը որսոր-
 դութիւնը վերջացնելուց յետոյ՝ վերադառ-
 նար կրկին այս վանքը: Եւանգելիսան իմա-
 նալով այդ լուրը, որ այնտեղ էլ ուշ էր ե-
 կել, սարսուռ զգաց եւ խնդրեց հայր քարոզ-
 շին, որ թոյլ տայ իրան այդ վանատանը
 կենալ սպասելով Գաբրիէլի վերադարձին:
 Այս ամենից խելացի միջոցն էր համարում
 եւ Բազիլը մնաս բարեւ ասելով Եւանգելի-
 նային՝ ուղի ընկաւ իր ընկերներով եւ ա-
 ռաջնորդներով միւս առաւօտեան յետ դէպի
 տուն:

Յամբ էին ընթանում օրերը, շաքաթ-
 ները եւ ամիսները: Նոր էին դեղնել բըրն-
 ձի կանաչ արտերը, հունձն էլ անցաւ, հա-
 սաւ ու պրծաւ աշունն էլ, սկսեց ձմեռը,
 քայց Գաբրիէլը չըվերադարձաւ վանատուն:
 Վերջապէս քացեց զարունը, թոռունները
 սկսեցին զեղզեղել անտառներում, իսկ Գաբ-
 րիէլը չըկար: Միայն ամառը լուր եկաւ, որ

նա շատ հեռու, հիւսիս-արեւմտեան կողմերում, Միչիգանի անտառներում, Սապինա գետի ափին բնակատուրել է: Այն ժամանակ Եւանգելիան միանալով դէպի հիւսիս տուն-վերադարձող ուղևորներին, թողեց ապաստանած վանքը: Բայց երբ երկարատեւ, ծանր, շատ յամախ վտանգա ից ճանապարհորդութիւնից յետոյ նա ժամանեց Միչիգանի անտառները, — որսորդի բնակարանը գտաւ ամայի եւ քանդած:

Այդպէս անցան շատ երկար եւ տխուր տարիներ եւ Եւանգելիային պատահում էին կամ միսիոներ — քարոզիչների հետ, կամ գինւորների հետ պատերազմի դաշտում, կամ խուլ գիւղերում, կամ մարդաշատ քաղաքներում: Ուրուականի նման յայտնւում էր նա եւ անյայտանում: Գեղեցիկ էր եւ մատղաշ նա իր արտանդական կեանքի սկզբում, բայց տարի տարւայ վրայ խամրում էր նրա գեղեցկութիւնը, անձկութեան եւ խոր վշտի դրօշմը կիցելով նրա կերպարանքի վրայ եւ նրա գլխի մազերը հետգհեռէ ձերմակում

էին: Դեղաւար գետի ափերում, անտառային ջրնաղ հովտում կայ մի աղմկալից քաղաք: Այստեղ վերջնականապէս մտաց Եւանգելիան, որովհետեւ դա քիչ նմանութիւն էր բերում իր հայրենի Ակադիային՝ իր կրօնակերպնակ 1) արանով, որի յիշատակն անջնջելի էր իր սրտում: Արքուն հասակն արդէն անցուցած լինելով, նա, կարծես, հաշտուել էր իր քախտի հետ: Եւ չէր մոռնում Գաբրիէլին, միայն նա, կարծես, մնած էր եւ իր յիշողութեան մէջ նա մնում էր նոյն ծաղիկ հասակում, ինչպէս որ տեսել էր նրան առաջին անգամ: Տանջանքներով եւ վշտերով լի կեանքը սովորեցրաւ նրան համբերութիւն, անճանախրութիւն եւ նրա սէրն աւելի լայն ծաւալ ստացաւ: Մի քանի տարի նա գթասիրտ քոյրերի կարգը մտաւ եւ այցելում էր աղքատների բնակարանները՝ քաղաքի ամենահեռուոր խուլ անկիւններում, ուր բոյն էին դրել ծայրահեղ

1) Կակեր — բողոքական դաւանութեան մի տեսակէ հետեւորները կոչուում են կակեր:

չբաւորութիւնը, որա հետ էլ հիւանդութիւնները եւ տանջանքները: Ամբողջ գիշերներ անցկացնում էր նա հիւանդների անկողնի մօտ եւ միայն վերադառնում էր առաւօտեան հանգստանալու:

Մոսկալի վարակիչ ախտ եկաւ Ճարակեց այդ քաղաքը. ոչ հարուստը, ոչ աղքատը չէին մողոպրում այդ հիւանդութեան մանկերից, մանաւանդ կոտորում էին անտուն, անոր խեղճերն եւ զթասիրտ քոյրերը խրամ էին հոգսերի մէջ: Մի շաքաթ առաւօտ հիւանդանոց մտնելիս, Եւանգելինան քիչ կանգ առաւ պարտէզում ծաղիկներ քաղելու, որ նրանցով ուրախացնէ մի որ եւ է տնանկին: Երկարածիգ սրահներում հով էր եւ խաղաղ, քայց պատուհաններից լսում էր եկեղեցու երգեցողութեան ձայնը: Յուշիկ յուշիկ Եւանգելինան քայլում էր հիւանդների մօտով, իր պաշտօնը կատարելով, քայց յանկարծ նա կանգ առաւ ընդարմացած եւ վախեցած. նրա գոյնը թռաւ, ծաղիկները ձեռից ընկան. նրա առաջ, մահճակապի մը:

րայ պառկած էր մի ալեգարդ ծերունի. սակայն տենողը, կարծես, վերադարձնում էինէր երիտասարդական երեսի գոյնը...

Մեռնողն անշարժ ընկած էր եւ ըտրոովին յուշը գնացած՝ գտնուում էր նիրճման եւ մահւան մէջ: Սարսափի գոչումը հասաւ նրա ականջին. նա ծանաչեց Եւանգելինայի ձայնը: Այն ժամանակ տեսեան մէջ տեսաւ նա իր մանկութիւնը, Ակադիայի լեռները, անտառները, իրանց գիւղը, դաշտերը եւ նրանց մէջ Եւանգելինային: Երա աչքերը լցեցան արտասուքով, եւ երբ նա արտեւանունքները քիչ քացաւ, տեսիլն անյայտացել էր... Եւանգելինան չոքել էր նրա անկողնի մօտ: Եւանգելինայի անունը դուրս թռաւ նրա բերնից թէ չէ, դարձեալ նա առաջւայ պէս անշարժացաւ. լոյսը յաւիտեանս մարեցաւ նրա աչքերում...

Եւ այդպէս ամեն քանի վախճանը հասաւ. վերջացաւ յոյսը, երկիւղը, վիշտը եւ համբերութիւնը: Եւանգելինան շնորհակալութիւն յայտնելով այս մեռօյին տեսակցու-

Թեան արժանանալուն համար՝ խոնարհու-
թեամբ կախ ձգեց գլուխը...

Ի

ուլ եւ մոնջ կանգնած է նախնական անտառը: Շատ եւ շատ հեռու նրանից, իսպառ անյայտ որ եւ է մէկին, քարձրանում են երկու շիրիմներ, ուր հանգչում են Գաբրիէլ եւ Եւանգելիսան մարդաշատ քաղաքի կաթողիկական համեստ գերեզմանատանը: Երանց շուրջը ընթանում է անվախման կեանքը, քայլում են ոտները, գործում են ձեռները, ըստիւմ են սրտերը, մտածում են գլուխները, իսկ նրանք վաղուց արդէն հանգչում են, վերջացրած լինելով իրանց երկար ուղին:

Մոնջ կանգնած է նախնական անտառը, քայց նրա սուերախիտ զովութեան տակ

այժմ՝ ապրում է ուրիշ ժողովուրդ, որ ունի այլ լեզու եւ այլ ըարք:

Միայն Ատլանդեան ովկիանուէ տըխուր ասիերին տեղ-տեղ կենում են սակաւաթիւ ակադիացիներ, որոնք վերադարձել են արսորավայրերից, որպէս զի մեռնեն հայրենիքում:

Երանք իրանց տներում երեկոները դեռ եւս յիշում են եւ պատմում Եւանգելիսայի մասին. նրանց գրոյցներին ձայնակցում են անտառը տխրութեամբ եւ ովկիանոսի աղմկալի ալիքները, որոնք յուսարեկ կոծով զարնում, փշրում են ժայռոտ ասիերին:

Վ Ե Ր Զ



ՄՄ Հուլիսի 1940-ական թվական



MAL024400

